

ՎՃԱՆՈՐԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ

Պաշտարան	համար
Տարեկան	12 Ֆր
Վեցամսյան	6 "
Արևմտահայերենի համար տարեկան	15 "
Վեցամսյան	8 "

Ավերիկայի համար	
Տարեկան	3 ռյ.
Վեցամսյան	1.50 "

Ինքնուրույն տպարանում տպագրվում է շաբաթը մեկ անգամ 12 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 6 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 3 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 1.50 ֆրանկով:

Վաճառքի համար ձևի 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

ՄԱՐԿԻ ԱՋԳԱՅԻՆ ԲԱՂԻՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐ ՏՄԱՐՋՈՒՄԻ ԶՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԱԲԸ

Նամակ կրողի և շաբաթը մեկ անգամ 12 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 6 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 3 ֆրանկով և 12 ֆրանկով անգամ 1.50 ֆրանկով:

Редакция на вѣстникъ
„Шаржумъ“
Варна

Redaction du journal
„Charjoum“
Varna (Bulgarie)

Արևմտահայերենի համար
ձևի
(20 ՄԱՆԹԻՄ)
Պաշտարանի համար
ձևի
(15 ՄԱՆԹԻՄ)

Գրություններ և չեմ տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱՎՃԱՆՈՐԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ ԳՐՈՒՆԳՐԻ ԲԱՎՃԱՆՈՐԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԻ ԵՒ ԿԱՆԻՍԻՎ ՎՃԱՐՆԵՐ

ՏՕՔԹ. Տ. Ա. ԳՈՒՅՈՒՄՃԱՆՆԵՐ

Փոխադրուած է Օվէթի Բրաւ եկեղեցւոյ դիմաց. Ալոշտատ Արարի թիւ 1. ուր կրնո՞ւն ճիշտագ ածն օր 10—12, 2—5. Իսկ հինգշաբթի 10—12, 1—3. Գույումճեան ընտանիքը պաշտօնական այցելութիւն կընդունին մինակ հինգշաբթի օրը 25-ը վերջը:

Սօֆիա

ՈՉ—ՈՒՍԱՀՊԱՏԱԿ ՀԱՅԵՐՈՒՆ



Յարգելի հայրենակիցներ, Յայտնի է Ձեզ, որ Ռուսիոյ նախարարական խորհուրդը իր յունիս 12ի նիստին մէջ որոշած է յարքունիս գրաւել հայ եկեղեցւոց պատկան կալուածները, որոնք ըստ նոր տնօրինութեան պիտի կառավարին այսուհետեւ պետական կալուածներու նախարարութեան կողմէ: Իսկ կալուածներէն ստացւած հասոյթները պիտի յատկացնին ծիսական և ուրիշ կարգի պարոցներու պէտքերուն և այդ ծախքերէն մնացած գումարները միայն պիտի յանձնին համապատասխան եկեղեցիներուն ու վանքերուն:

Յունիս 12ի կարգադրութիւնը, խելով հայ կղերի ձեռքէն եկեղեցւոց պատկան կալուածներու վարչութիւնը, ո՛չ միայն կը խախտէ Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքները ազգային գոյքերու կառավարութեան խնդրոյն նկատմամբ, այլև կը հանդիսանայ իբրև նորատեսակ յափշտակութեան ձեռքը 100 միլիոն ռուբլի արժէքաւոր հայ ազգային ստացւածքներու Դաւար է ուրիշ կերպ անվանել ռուս նախարարներու որոշումը, քանի որ հայ ծիսական անվանած գործընդերք, որոնց գոյութեան պահպանման համար պէտք է ծախսել կալուածական հասոյթներու մեծագոյն մասը. չունին գրեթէ ո՛ր և է հայ ազգային և կրօնական նկարագիր: Բա-

ւական է միայն յիշել, որ այդ վարժարաններու ուսուցիչներէն շատերը չեն պատկանիր հայ ազգութեան, որ հայերու հետ միասին ոչ հայ երախաներ ևս կը յաճախեն այդ վարժարաններէն մեծ մասը, ուր հայոց լեզու և կրօնի դասաւանդութիւնը դարձած է սոսկ ձեւականութիւն մը: Ռուսաստանի հայ ծիսական գործընդերք իրենց ներկայ գոյութեան մէջ կը հանդիսանան ո՛չ թէ իբրև կրթական հիմնարկութիւններ, այլ իբրև ռուսացման նոր ձեւի մը հիմնարկութիւններ, որոնք կը ձգտին ոչնչացնել հայութիւնը իր իսկ սեփական միջոցներովը: Բացի այդ, չկայ ո՛չ մի երախտաւորութիւն, թէ ռուս պաշտօնականները չպիտի համարին յայտնական գործընդերք համայն պետութեան ուսումնարաններ, ուր կը սովորին նաև մի քանի հայ մանուկներ, և հետեւաբար ո՛չ ոք կարող է վստահ լինիլ, որ հայ եկեղեցական կալուածներու եկամտով ռուսական կառավարութիւնը չպիտի հայտնի իր իսկ սեփական պէտքերը:

Ահա թէ ի՞նչու յունիս 12ի որոշումը հայերու կողմէն հանդիպեցաւ միահամուռ դիմադրութեան: Ամբողջ հայ հոգեւորականութիւնը, իրեն զլուխ ունենալով եկեղեցւոյ ալեգարք պետը, և համայն հայ հասարակութիւնը, առանց խորութեան կուսակցութիւններու, հասակի ու սեռի որոշեցին չընդունիլ այս պարտիզ կարգադրութիւնը և բողոքել սանձարձակ կամայականութեան դէմ:

Կաթողիկոսը հեռագրով ու նամակներով աղերսեց կայսեր ի նկատի առնել իր բերած լուրջ բացատրութիւնները կ'յետաձգել յիշեալ որոշման իրագործումը: Սինոդի անդամները, թեմական սուրբապետները հրաժարական տուին, անհնարին գտնելով իրենց պաշտօնավարութիւնը ներկայ պարագայներու մէջ: Ռուսաստանի բոլոր քաղաքներուն և նոյնիսկ գիւղերուն հայ բնակչութիւնը արևմտահայոց բողոքը քննարկեց կա-

տարած աւաղակութեան դէմ և մերժեց յանձնել կալուածները: Ռուսիոյ դարաւոր տիրապետութեան ընթացքին մէջ առաջին անգամ էր, որ կողմասի մէջ հայուսուր հայեր կուեցան բռնակալութեան դէմ, իրենց թափած արիւնքով ու կեանքի գնով պաշտպանելու համար հայ ազգին իրաւունքները:

Մերունի հայրապետին աղերսունքները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Հայ հոգեւորականութեան գլխաւորութիւնը խորտակելու համար ուստիկան Պլեվէի կառավարութիւնը նոր հրաման արձակեց, որով հոգեւորական պաշտօններու մէջ հաստատուելու համար նախապէս կը պահանջուի կողմասի կառավարչապետին կամ նահանգապետներուն հաճութիւնը ահա՛ մի պարագայ ևս, որ նոր տեսակի չի նոյն իրականութեան կը վերածէ հայ հոգեւորականութիւնը, զայն կը դարձնէ կառավարութեան ձեռքին մէջ անվրէպ զէնք մը՝ անոր նպատակները իրագործելու համար: Փողովրդին արդար բողոքը խեղդելու նպատակով հայաբնակ զլխաւոր քաղաքները յայտարարուած են զինուորական գոյութեան մէջ: փակուած են քիչ թէ շատ արժանաւոր դիրք բռնող թերթերը, արքայաւոր են ու կ'արտուրին բողոքի նշոյլ ցոյց տուող հայերը, կը հալածին հայկական գաղութներու ներկայացուցիչ տաճկահայերը... Այսպէս, բռնութիւնն ըրաւ, ինչ որ կրնար ընել:

Խարէութեան միջոցաւ, մըտրակի հարածներու սարսփին տակ, զէնքի ուժով ձեւակերպուեցաւ թղթի վրայ կալուածներու մեծ մասին փոխանցումը: Վայրագ պաշտօնականները խորտակեցին էջմիածնի գանձարանը և Մայր Աթոռի գումարները փակեցին Երեւանի նահանգական գանձարանի մէջ:

Չրկւած ու կողոպուած իր դարաւոր հարստութեան աղբիւրնեքու հասոյթներէն, հայ բարձր

հոգեւորականութիւնը մատնած է ծանր կացութեան. էջմիածնի ճեմարանը, թեմական գործընդերք պարտքով ու մասնաւոր հասոյթներով է միայն որ կը պահպանուին:

Ոչ ոքի յայտնի է, թէ ուր պիտի յանգի սկսւած պայքարը: Մերժելով ստանալ տէրութեան յափշտակած կալուածներուն եկամտաւոր, Ռուսաստանի մեր եղբայրները որոշած են շարունակել կռիւրը:

Այս պարագաներուն մէջ լզէտք է որ ուրիշ երկիրներու հայերն ևս մասնակից լինին ազգային շահերու պաշտպանութեան գործին:

Մէկ կողմ թողլով բողոքի այն ձեւերը, որ մինչեւ այժմ հայ գաղութներու այլևայլ ժողովներն արտայայտեցին, ինչպէս և Կ. Պոլսոյ պատրիարքարանին ռուսաց դեսպանատան միջոցաւ ներկայացուցած զեկուցագիրը, մենք այս գոյութեամբ կ'ուզենք սուսջարկել բողոքի մի նոր միջոց ոչ ռուսացապատակ հայերուն, այն է՝ աշխատել կալուածական խնդիրը գնել Լահէի Միջազգային Ատիանիստ Վեբ:

Ռուսաստան գտնուող հայ եկեղեցական կալուածները, ինչպէս կը վկայէ նոյնիսկ ռուս կառավարութեան կողմէ 1836 թւին կազմուած յատուկ կանոնադրութիւնը (Պոլսոյ թիւն): կը կազմեն սեփականութիւնը համայն հայութեան լուսաւորչական եկեղեցւոյն, այսինքն բոլոր լուսաւորչական հայերուն: Յիշեալ գոյքերուն մեծ մասը, հայ սրբավայրերուն անունով գնւած էն աշխարհքի բոլոր անկիւնները ցրւած բարեպաշտ հայերու անձուկ միջոցներովը: Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի հայերը նոյնչափ մասնակցած են այդ ազգային եկեղեցական հարստութեան գումարման, որչափ և Հնդկաստանի, Եգիպտոսի, Հոլանդայի, Ռումանիայի, Ֆրանսայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրներու հայերն ու անոնց նախահայրերը: Հետեւա-

ՌՈՒՍԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ
ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՅ
ԿԱՆՈՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

(Շար. նախորդ թիւն եւ վերջ)

2. — Այս յիշեալ զուգակները եւ վաւերաթուղթերը ստուգելէ ետք լիազօրեմբեր կ'սկսին գրաւել նոյնիսկ գոյքը, միեւնոյն աստիճանի առջի սոցիալականութիւնը:

1. — Քաղաքին տեսները, խանութները, խանութները, ջրաղացները, գինիի մասանները եւ ուրիշ անասական շինութիւնները, բացի բնակութեան համար ոչ ոք չէնքերէն, բնակարաններէն նոյնպէս եւ մասակարարութեան վերաբերեալ մասաններէն ու շէնքերէն որոնք կը թողուն եւ կեղծեցականներու արամադութեան տակ, անոնց պէտքերուն համար: Այս կալուածներն ու իրենց տակը գտնուած գեանքները պէտք է ընդունի մասնաւոր հաշուեցոյցով:

2. — Պատրիարք-կաթողիկոսի եւ վիճակաւոր առաջնորդներու ամտոնային բնակարանները, որոնք հինէն ի վեր գոյութիւն ունին, անոնց մօտ գտնուող այգիներով, բանջարանոցներով եւ ծառաստաններով կը թողուն յիշեալ հաշուեցոյցի տակ: Այս հաշուեցոյցի տակ:

3. — Հողային կալուածներու, թէ՛ վարկահոգեբուն եւ թէ՛ անտանիլու կալուածոց հետ մէկտեղ կ'առնուին նաեւ արագորութեան բոլոր գործիքները, սակայն չարք եւ ուրիշ անասական առձեռն պաշարեղէնները կը թողուն այն անձերուն եւ հաստատութիւններուն, որոնք իրաւասութեանն են կալուածները:

4. — Եթէ այն հողային կալուածները, որոնք եկեղեցիին կամ հոգեւոր հաստատութեան մը կը պատկանին եւ երեք Դեպարտմենտը) վճարուած են չափով եւ բաժնուելէ ետք չեն կրնար վատ վատ կառավարուիլ, այդ պարագային մէջ այդ աւելորդները, մինչեւ չոր տնօրէնութիւն չեն գործադարձուիլ եւ այս մասին պէտք է յիշատակել արձանագրութեան սէջ:

5. — Պէտք է դրամագրութեան բոլոր տոկոսաւոր թուղթերը գրաւել նոյնպէս անշարժ կալուածներուն զբաւակցութեամբ: Կարծաթեղթերը իսկ, եկեղեցական պատրաստ դրամէն գրաւել նաեւ բոլոր հաշուով հարկարարները, բացի հազարական սուղթէ: աւելորդ մասը կը ձգուի եկեղեցական ընթացիկ ծախքերու համար, ինչ որ պէտք է յիշատակել արձանագրութեան մէջ:

Ե. — Լիազօրեմբեր եկեղեցիներէն եւ հոգեւոր հաստատութիւններէն գրաւուած գոյքերը մանրազնին կերպով նայելէ ետքը, կը կազմեն արձանագրութեան երկու օրինակ այդ գոյքերուն ընդունելութեան մասին, որոնց մէջ կը նշանակեն նաեւ գրաւման եւ քննելու մասնակցող անձերուն ստորագրութիւնները: Ետքը յիշեալ անշարժ կալուածները եւ անոնց պատկանած թուղթերը Պետական կալուածներու վարչութեան կողմէ այդ բանին համար լիազօրութիւն ունեցող պաշտօնեան յանձնելով, պէտք եղածը կը գեղեցանեն նաեւ նահանգապետին եւ սեղանական կառավարութեան, ներկայացնելով միեւնոյն աստիճանի գրաւուած գոյքերուն զուգակագրութիւնը:

(*) Մէկ Դէստարինը 11000 քառ. մէթր է:

թիւնները, որպէս զի ներքին գործոց եւ հազարակցութեան եւ Պետական կալուածներու նախարարութեանց զրկուին: Իրամագրութեան վաւերաթուղթերը եւ նոյնիսկ գրամագրութեան կը ներկայացունին նահանգապետներուն, երբ նահանգապետ գտնուի, որպէս զի իրեն անոնք ներքին գործոց նախարարութեան զրկուին: Ստոր Վասնութիւններու հոգեւոր գործերուն կանոնադրին համեմատ:

Ը. — Եթէ ունի եկեղեցիի կամ հոգեւոր հաստատութեան անշարժ կալուածը կը գտնուի ուրիշ զուգակ կամ նահանգի մէջ, այդ պարագային լիազօրեմբեր անոր տօքի մանրազնեցակագրութիւնները պահանջելէ յետոյ կը ներկայացնեն անոնց սեղանական նահանգապետին զրկելու համար այն նահանգին կ'ազատուին, ուր հաստատուած է կալուածը, որպէս զի այս վերջինը կ'որոշուի թիւն մը ընէ գայն գրուելու համար:

Թ. — Եթէ գրաւուած կալուածը կամ անոր մասը վարձու տրուած է, կամ ունի անձի, օգտուելու համար, այդ պարագային վարձու բնորոշներուն եւ կամ կալուածը ձեռքը ունեցողներուն տեղեկութիւն կը արտաբերէ յիշեալ կալուածը գանձարարին ձեռքը անցած է եւ միեւնոյն աստիճան կը հրամային անոնց: որպէս զի սակէ ետքը ներկայացնեն վճարուածները պետական գանձին, ճշգրտութեամբ ցոյց տալով համապատասխան աւանդները, իսկ անարկայական վճարումները պէտք է ընել այն անձին որ լիազօրութիւն կ'ունենայ կառավարելու ընդունած կալուածը:

Փ. — Եթէ անց կալուածները երկրագործութեան եւ Պետական կալուածներու նախարարութեան տեսչութեան յանձնելու համար, բոլոր ծախքերը կը հոգացուին այն վարկիւնէն, որոնք նշանակուած են Դեպարտմենտներու համար: իսկ յետոյ կատարուած ծախքերը կը հոգացուին այն գումարներէն, որ պէտք է վերցուի հարկի ընդունուած քանակութեամբ Հայկուստորական եկեղեցիին անշարժ կալուածներուն եկամտանքէն: Սակայն ծախքերը որ կը վերաբերին դրամագրութեան զրկելու եւ փոխադրելու ներքին գործոց նախարարութեան տեսչութեանը աստիճան կը կատարուին այդ գրամագրութեան ի հանդէս:

Նախարար ներքին գործոց
ՊԵՏԻԿ
Մանգուլի Էփէնդ

ՅՈՒԿԻՒԻ ԶԱՅԱԳԵԱՆ ԿԻՔԱՐԱՆԸ

ՅՈՒԿԻՒԻ

Ամսոյս 7ին չորեքշաբթի իրիկուն ժամը ունեցանք քանի մը հաճելի(1) ժամեր վայելելու, շնորհիւ Սայտիմեան պատեհիլին: որ իր բարի սովորութեան համաձայն այս անգամ «Էրպրոցական» շքեղ երեկոյթ մը կազմակերպած էր:

Հանդէսին ամբողջութիւնը կը կազմէին քանի մը կցկուտու ու աններգաշնակ երգեր, մեծ մասամբ գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուաւ եւ քուն բերելու չափով իրար ու ձանձրացուցիչ տրամախօսութիւն մը, Սարտուսի պատեհիլական հանճարին արժանաւոր մէկ արտագրութիւնը:

Չպիտի փորձե՛՛ տրամախօսութեան այս կամ այն կէտը քննադատել, բան մը որ շատ երկար եւ թերեւս

բար այդ բոլոր հայերն ունին հաւատար իրաւասութիւն պահանջելու, որ յիշեալ գոյքերը գտնուին իրենց վստահութիւնը վայելող մարմնոյ մը հսկողութեանն ու տրամագրութեանը տակ, որպիսին բոլոր հայերու համար կրճան գիտնալ ներկայիս մէջ էջ միւս նայ Մայր Աթոռը: Հակառակ պարագային ազգային այդ ամբողջ հարստութիւնը բաժանուելու է բոլոր հայ եկեղեցական համայնքներու միջեւ:

Կալուածներու գրաման փաստը կատարելէ յետոյ ահա այդ դասն է որ պիտի սկսին այսօր ոչ ոք անհասկացաւ հայերը ուս կառավարութեան գէմ. ատոր մասին է որ պէտք է խորհիլն ու գործեն բոլոր հայերը:

Լուսաբանելով խնդիրը իրենց սեղանին տեսակէտներով ու փաստերով, հանդիսանալով իբրեւ մի հաւաքական կրօնական մարմին, պանազան երկիրներու մէջ ապրող հայերը պէտք է պաշտպանեն իրենց շահերը, բան մը, որ ներկայ պարագաներուն մէջ կը լինի եւ ընդհանուր ազգային շահերու պաշտպանութիւնն իրենց, պէտք չէ մոռնալ որ ունի հետեւանքի հասնելու համար անհրաժեշտ է, որ իր բարձր մի բերկում հայերու շահերուն պաշտպանութիւնը յանձն առնէ այդ ներկի կառավարութիւնը, որը միայն կարող է գիմել Լահէի բարձրագոյն Ատենին պաշտօնապէս:

Իրագործելու համար այդ անհրաժեշտ է խորհրդակցութիւնն ու համաձայնութիւն ամէն մի երկրի հայութեան մէջ: պէտք է լուրջ, փաստաբանուած խնդրագիր ներկայացնել երկրի կառավարութեան եւ հաւաքել բոտ կարելու շատ ստորագրութիւններ, առկէ զատ պէտք է նաեւ բնտրել վստահելի մարմին մը, որ կարենայ նոյն անգամ կերպով հարցն առաջ մղել:

Մեր կողմէն կրնանք հազորդել, որ միջազգային իրաւարարական խնդիրներու տեղեկան ձեռ յուսադրած են մեզ, որ յարուցելիք խնդիրը կրնայ ունենալ որոշ քաղաքական հետեւանքներ, եթէ պատեհութիւններէն գոնէ մին (Անդրիա, Ամերիկա, Հօլանդա կամ մի ուրիշը) համաձայն ինքն ձեռնարկ լինելի վստահ ենք, յարգելի հայրենակիցներ, որ ազգային այս հրաւիր խնդրոյն առջեւ, մէկ կողմ ինքզինք կուտակցական բաժանումները, ամէնքդ պիտի գործէք ձեռք ձեռքի ուսած, ընդհանուր ու ժող պաշտպանելու համար մեր բնդ հանուր ազգային շահերը:

Կը յուսայ եւ կը վստահի ձեռ շրջահայեցութեան ու անկեղծ հայրենասիրական զգացմունքներուն վրայ:

Հ. Յ. Մ. ՍՐԵԻՄՏԵԱՆ ԲԻԻՐՈ
1875 Յուլի 1804, Ժրնիկ

անկարելի պիտի ըլլար: որովհետեւ ամբողջութիւնը ուրիշ բան չէր, բայց եթէ անկապ ու անխառն նախադասութիւններու երկար շարք մը, իրար հակասող իմաստակութիւններով եւ համեմատ անհամ ու յաճախ ծաղրելի ձեւերով ու երեւոյթներով:

Պատեհիլի զգալով հանդիսին թուրքացած անհաճոյ տպաւորութիւնը, որ անհերքեալ կը նշմարուէր ներկայի փորձեց այդ տպաւորութիւնը մասամբ մեղմացնել, անյաջողութեան գլխաւոր պատճառը վերագրելով ու շակերտներէ ոմանց անհանգստութեան, չուզելով անշուտ խոստովանել թէ մեղաւորը իւրեք աշխարհներ չէին, որոնք թուրքական գոց սորված էին իրենց գերբը բաւական յաջողութեամբ եւ կապիտալ իւրացուցած պատեհիլին կեղծ ու շակերտեցեալ ձեւերը, հասարակ իսկ գրութեան տափակ ոճը եւ անխառն լուրջակալութիւնը, Պ. Սարտուսին իր վկային նիւթ ընտրած էր, ըստ իր բացատրութեան, Գրիստոսի ծննդեան պարագաները գորս անհարակոյն սշխատած էր կապել նոյն ժամանակի սզգային պատմութեան հետ, յիմնուելով աւելի հնարովի եւ դաղրութիւններու վրայ, քան թէ պատմական ստուգութիւններու:

Պատեհիլի յուսալիկայ անելի խիստ քննադատութիւններու աստիճաններու նպատակաւ ջանաց ասկէ առաջ ճշմարտութի թղթակցիցին հարպարակով ըրած անաչառ քննադատութիւնները պարզապէս իրենց զիմ հակառակութեան մը արդիւնք հոյակալ եւ ըրրինի յաւանտարութեամբ մը ըսուած էր: ալ համբերութեան չուզել անցած էր: սակայն ինքը իբրեւ ազգին շահերուն նուիրուած գործիչ մը կը համբերէ այդ բոլոր ամբաստանութիւններուն եւ նախատինքնութեան: Ի վերջոյ սեր պարտնը իր շակերտներուն անհեղափոխութիւնը վերագրելով ընդհանուր ազգին ցեղային թիւութեանը, կը հարաւերի հայ ժողովուրդը կոյր հնազանդութեան, անպիտակից հետեւականութեան, անոր մէջ նշմարելով ամեն շարեաց դարմանը, վերկուութիւնը:

Այս ամէնը հոս սրձանագրելով նպատակ չուէիմ բնաւ վարկաբեկ թողալու կաս պատեհիլին, որ յայդ կերպով յառաջ կը տանի իր մարդստութեան ծրագիրը, այլ կուզեմ իսր զլտով, մասնացոյց ընել մեր հասարակութեան մէջ տիրող թունաւոր անտարբերութիւնը զպարզական խնդրոյն նկատմամբ, ոյու շնորհիւ գոյութիւն ունին տակաւին մեր մէջ այս կարգի հաստատութիւններ, որ կերպին կը խամրին տասնեակ հայ ման շինելու միտքն ու սիրքը եւ կը մեծանան անոնք օտարախի զգացմունքներով աւելցունելու համար անտարբերութիւնը հանդէպ հայ տատապանքին, հայութեան ծով ցաւերուն:

Ամօթ եւ նախատինք անտարբերներուն...
Երուանդ
Յիւլի 10 յուն 1904

Ի ՆՊԱՍՏ Հ. Յ. ԴԱՇՆԱԻՑՈՒԹԵԱՆ

Սուրիւն, 7 յունիւ 1904

Տեղւոյս հանգանակութիւնը եւ զած է 1000 ֆր. ե ոչ թէ 1000 զրջ: Տարբերութիւնը մեծ է:

ուստի կուգանք զայն ուղղել(°) :
Ուրախ ենք յայտնելու , որ Դան-
գանակութիւնը յաջող կերպով
չարունակուեցաւ և մինչև հիմա
դոյաջամ արդիւնքը հասաւ 1133
ֆր. 20 սթ.ի : Ժողովրդին դէպի
Հ. Յ. Դանգանակութիւնը ցցուցած
համարանքը և հաւատքը մեծ է :
Հանգանակութիւնը դեռ պիտի
չարունակուի :

Գովելի են ձերունի ընկերով մը
թափած ջանքերը և ցոյց տուած
եռանդը : Զընայելով իր նեղ դը-
րութեան ան ոչ ժամանակ խնա-
յեց և ոչ ալ յազնեցաւ : Յուզիչ
են ինչպստտ Հայրենիքի կառույ-
ններուն կատարուած հանգանա-
կութեան մէջ մանուկներու մաս-
նակցութիւնը : Ահա՛ այդ սիրե-
լի փոքրիկներու անունները իւ-
րենց նուէրներով .

- Արամ կարապետեան 7 տարե-
կան նուիրեց 2 ֆր.
- Նուարդ 6 տար. 1
- Աննա 2 " 1—
- Արշակ 3 " 3—

Թող ամչնան այս օրինակներու
անջեւ անտարբեր և չեղօք տար-
բերը , որոնք անտեղի պատու-
ակներով կուզեն իրենց խղճի
բողոքը խեղդել : Հալար ամօթ
անտարբերներուն և գործին չը
մասնակցողներուն , իսկ մենք
ընկերներ՝ մեր վրայ է լեռնա-
ցած Հայաստանը պատագրելու
վեհ գործը , մենք նոր ոգեւորու-
թեամբ եռանդ ստանալք միշտ
բարձր ու յաղթական պահելու
համար Յեղափոխութեան Դրօշը...

Մըջիւն

(°) Մենք արդէն վերականգնով մը
ուղղած ենք այդ սխալը :

Ս. Մ.

Ի ՆՊԱՍՏ ԶԵՅԹՈՒՆԻ

Ն Շ 13 յունուար 1904

Յարգելի խորագրութիւն ,

Ձեր հասցէին զրկեցի 100 ֆր. , որ
սերպարանակ հայրենակիցներու մէջ
հանգանակեցի ի նպաստ Զէյթուի :
Մենք կը ցանկանք ձեր միջոցաւ
զայն ծառայեցնել իր նպատակին(°) :
Ահա հանգանակութեան ցանկը .
Պ. Զ. եւ Պ. ընկ. 20 ֆր.—
« Ս. Գլորիան » 15 » —
« Ս. Վարդանեան » 10 » —
« Ս. Կար » 10 » —
« Անր եւ Յով. » 10 » —
« Հայր եւ որդի » 5 » —
« Գարբիէեան » 5 » —
Իրօխոյանեան և Դէորդ. 25 » —

Գումար 100 ֆր.
Ընդունեցէք , յարգելի ու խմրա-
գիրներ , յարգանքս հուսատին :
Հանգանակիչ
Միւրթ. Գ. Բրոխուսեան

«ՇԱՐԺՈՒՄ»-ի Պատ. Խմբագրու-
թեան

Վառնա

Տիար ,

Դասնութեամբ սրտի կարգացինք
«Իրաւունք» վերջի թիւի մէջ ան-
ցորդ ստորագրութեամբ գրութիւն
մը , որ վերջեւս Պորկազի մէջ տա-
րածալուած կարգապահութեան
ստացող լուրը տեղոյս Դանգանա-
կներին վերաբրած էր : Այդպիսի լուր
մը ելաւ Պորկազին փողոցները ,
սակայն ոչ այնպէս , կը զրէ պ.
Անցորդը . այլ որպէս ի՞նչ դանակ-
ցականներէն Տիար Վահան Մկրտիչ-
եան Մշեցի . և մեր հին հիշակեան
ընկերներէն Տիար Ղազար Միսեան
Դերմանցի , ի միասին վեց հարուած-
եան մը տուած կըլլան Մշեցի երի-
տասարդ ըստած սեփօրսթի մը ձեռ-
քը , որ երթալ սպաննէ Պարսկաս-
տանցի Հարէնց Արտաշէսը , Պորկա-
զի նախկին հոգ. հովիւ Տէր Տաճատ
քահանան և ժամակոյժ , և եք մի-

(°) Ստացած ենք այդ գումարը և
պիտի զրկենք Պատրիարքարան :
Ս. Մ.

միանց հակառակ անձնաւորութիւն-
ներ :

Արդ , յանուն հայ ազգին եւ Յեղ-
Ս. պատուոյն , կուգանք հրապար-
կաւ յայտարարել , թէ Պորկազի մէջ
սփռուած այն եղբարայրսպանութեան
լուրը բողոքովն անհիմն է , եւ այդ-
պիսի խորհուրդ մը թէ մենք դաշ-
նակցականներս եւ թէ հին հնչակ-
եան ընկերները ինչու երբէք յա-
ցած չենք մեր մտքին մէջ . հետեւա-
րար Դանգանակութեան բարձր անունը
հայ հասարակութեան առջեւ կոտորե-
լու զիտւումով չինձած ոչ շարած պողով
սուտ մըն է հակառակող , դաւաճան
խմբակի մը կողմէն որոնց շահատա-
կութիւնները , տեօրիսթիւն ո՛վ լի-
նելը եւ ամբաստանելոց յանցանքը ,
քարձեալ իրենց ըսելով , պիտի զը-
րենք մեր յառաջիկայ նամակով :

Պորկազի Հայ Յ. Դ. Դաշնակցու
թեան ԿՕՄԻՏԷ
14 յուն. 1904
Պորկազ

ԶԵՅԹՈՒՆՆԵՐԻ ԱՌ ՊԱՏ. ԱԶԳԱՅԻՆՍ

Ակնայ առաջնորդարանէ ընդուն-
ւած պաշտօնական նամակներ՝ աղե-
խարչ կերպով նկարագրելով ժողո-
վրդեան թշուառութիւնը եւ տիրող
աղքատութիւնը նիւթական նպաստ.
ներու անհրաժեշտ առաքումն թա-
խանձագին կը խնդրեն : Արդ սոյն
աննպաստ վիճակին մի դոյզն դար-
ման տանելու նպատակաւ : Ակնեցի-
ներէ հանգանակիչ մասնախումբ մը
կազմուած է , որ , 1-2 օրէն պիտի
ձեռնարկէ հանգանակութեան որում
կը հրահրուին բարեկէր աղքատներ
իմասնաւորի Ակնեցիք , որոնց գի-
տում պիտի ըլլայ , սիրաշօթար մաս-
նակցեալ :

Պորկազարանակ այն ամէն հայերէ ,
ըլլան Ակնեցի կամ տարբեր քաղաքէ,
որք կը փափաքին ինքնաբերաբար
իրենց լուծան բերել գերազանցապէս
սոյն մարդասիրական ձեռնարկին ,
կը խնդրուի որ բարեհաճին իրենց
նիւթական ինքնաբերոյիս նպատակները
(միմիւր զրամ) հասցնել Ն. Բէստան-
եան եղբարց վաճառատանց Ռուսուճը
— առնա . մինչ ց՝ 29 փետրվար 1904
ուր վերջնապէս պիտի փակուի հան-
գանակութիւնը :

մը , երբ վահրամ Բահրաւունի , Հա-
յոց 80-ամեայ կտրիճ սպարապետը ,
40:2 Թուականին բիւզանդական բա-
նակ մը Ախուրեանի հովտին մէջ
բնակին խորտոցեց : Այնուհետեւ Հա-
յաստանի արեւը մարը մտաւ եւ մութ
պատեց հայկական աշխարհի վրայ ,
մութ , որը մինչեւ այսօր ալ չէ փա-
րատուած .

Անիի այցելութեամբս իմ այս ան-
գամուան ճանապարհորդութիւնս
վերջացած էր : Թիֆլիս , Գուրթայիս ,
Պաթում . Պոնտոս հարեւանցի
ակնարկով մը անցնելէ ետք նստեցայ
նաւ :

Երկու օր շոգենալը օրօրուեցաւ
մայրական ծովու կապոյտ կահակնե-
րուն վրայ . այդ միջոցին իմ առջեւ
ցցուած էին շարունակ ճիւղկաս օս-
րերը՝ իրենց յաւիտեական ձերմա-
կով : Ծոգնաւը ինձ կը սանէր դէ-
պի արեւմուտը : Բայց բան մը յի-
շողութենէս չը ջնջուեցաւ , իմ վերջի
հրաժեշտ շէր , որ տուի ես այդ գե-
ղեցիկ երկրին , վերջին անգամը շէր ,

Մասնախումբս՝ լիայոյս է թէ ա-
մէն պարտաճանաչ եւ զգայուն հայ
անհատ պիտի փութայ իր կոչին պա-
տասխանել , այսու հարիւրաւոր եղկե-
լոյ թշուառութիւնը գոնէ մասամբ
ամոքած ըլլալու քաղցր գոհունակու-
թիւնը վայելել՝ կը յայտնէ միանգա-
մայն թէ նուիրատու բարեկէր ան-
ձանց անունները , մասնախումբս
խնամքներովը , պիտի հրատարակ-
ուին պորկազահայ մամուլը միջոցաւ :

Ի դիմաց Հանգանակիչ-Մասնա-
խումբի
Հ. Գ. Բիւսանեան
Ս. Մարգարեան
Ռուսուճը 13 յունվար 1904

ԴԺԳՈՅ ԵՐԿՐՈՐԴ



Ա.

«Շարժում»-ի ընթերցողները
կը լիչեն մեր առաջին Դժգոհը ,
որ երբեմն Պորկազի մէջ մի-
ութեանական կուսակցութիւն մը
ստեղծելու հովերը ունէր : Մենք
չենք գիտեր եղեր որ առաջին
Դժգոհը միութեան գաղափարին
նախակարգապետ էր , մովհաննէս
մկրտիչը , և անոր պիտի յաջոր-
դէր երկրորդը-խոշորայնիքն
Մեսիան , որուն տրեխներու կա-
պերը քակելու արժանիքը չու-
նէր առաջին Դժգոհը : Երկրորդ
դժգոհին , այսինքն միութեանա-
կաններուն Մեսիային անունը
գաղտնի չենք պահեր , և կը յայ-
տարարենք , որպէսզի միամիտ
ամբողջ զայն սուտ մեսիաններու
հետ չը շփոթէ :

Լսեցէք ժողովուրդը և հաւա-
տացեալք . երկրորդ Դժգոհը
Միութեանականներուն , եթէ կու-
զէք ամբողջ հայ ազգին , Մեսիան
Պ. Հմայեակ Խուչպուլեանն է , իր
արտաքինով քիչ մը նման ռուս-
ներու նկարս Քրիստոսին .

Ուրեմն որպէսզի լցցի բանն
մարգարէին , ոչ անապատներէն ,

որ խմբի Երեւանի գինին , վերջին
անգամը շէր , որ սեղմեցի Արարատի
ստորտը բնակող յարգելի հայրերուն
ձեռքը :

Եւ սրդարեւ իր այս հերմագին
ցանկութեան համեմատ Տօք. Բօր-
րախ երկրորդ անգամ ըլլալով արե-
ւելք եկաւ ու այս անգամ կովկասէն
սկսելով ճանապարհորդեց ամբողջ
Տաճկահայաստանը : Իր այս ճանա-
պարհորդութիւնը ան նկարագրած է
պատկերազարդ մեծ ու գեղեցիկ հա-
տորի մը մէջ , որու խորագիրն է
«Վոլկասէն մինչեւ Միջերկրական
ծով (Փօմ Բաւաքասուս պիս ցում Մի
թըլմէր) : Մենք դեռ առիթ կուենե-
անք «Շարժում»-ի մէջ յարգելի գիտ-
նականին նկարագրութեանց վրայ
անդրադարձուալու :

Գերմ. փոխադր. Մարգարեանի

ՀԿԹՎ ԲԱՐՁՐԱՒԱՆԴԱԿԸ ԵՒ ԱՆԻ

(Ճանապարհորդական Ակտուագրութիւն
Տօք. Բօրբայի)

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Ո՛չ այն վայրերը , ուր մենք ոտք
դրինք վրայ էին անուրի դէպքերու :
Բնութեան ներկայ արհաւիրքը կու-
գար մեր առջեւ պատկերացնելու
դժբախտ երկրի ցաւալի անցեալը :
Մեր շուրջը կը յուզուէին տարերքը ,
կաղմկէր փոթորիկը : Թանձր խաւա-
րի մէջէն անսրբուր կը տեղար յոր-
դառատ հեղեղներով , որոնք հովէն
ծնծուելով մեր ապաստանած մասու-
ոին բացուած քնեղէն ներս կը գար-
նուէին : Երբեմն-երբեմն կայծակնե-
րու կրակը հալածող օգիններու պէս
կուգային սաւառնիլ Բագրատունի-
ներու զգեակին վրայ , որու պատերը
այնքան բարձր եւ տխուր կանգնած
էին մեր առջեւ : Կարմիր փխարները
կը փայլէին , զրեակը վայկեան մը
կը վառուէր լոյսերու մէջ և նորէն

կը տիէր անոր վրայ խաւարը : Ա-
րեւը մայր մանելու ժամանակ էր ,
բայց կէս ժամէ ի վեր արդէն կոխած
էր մութը , դիմացի շէնքերու բաց-
ուածքները հողի կարելի էր որոշել
չէնքերուն դուրս ցցուած քարերէն :
Անձրեւի չուկոցին , երկնքի որոտում.
ներուն մէջէն կարծես աներեւոյթ
ոգիներ ստորերկրեայ ապաստաններու
մէջ իրենց ցաւը կուլային և կը հա-
ռաչէին ծանր կերպով . ասոնք կար-
ծես հառաչալքներէ : Էին Անիի այն
դժբախտ զոհներուն , որոնց երկու ա-
ռաջնորդները զստալիք ու պարտա-
զանց՝ ձգելով ժողովուրդը անպաշտ-
պան գաւաճանեցին զինուորի մը
կոչման եւ ստորերկրեայ գաղտնի
անցքերով փախուստ տուին : Նորէն
ինկաւ կայծակ մը եւ լուսաւոյեց
Ախուրեանի հովիտը , որու ջուրը
հիմա պղտորած հեղեղներով դէպ վար
կը հուէր :

Մեզմէ ոչ շատ հեռու . քիչ մը վարը
կատարուած էր հին Հայաստանի հե-
րոսական վերջին գործը , հոն տա-
րածուած էր փառաւոր յաղթանակ

